

«Քրաւրէնք բաննա Նասդուխնանըն Պարոնն Ովանէս Օղլու Քէէվօրովից, Եացքոխըրընկ, տա բան Սիմոն սարկավարքըրընկ, Զամոսցա շահարինընկ, die 12 Septem. A. 1619. Բատշահլիւրնա ուչունչի Զիլմունդնունկ տա Կաթողիկոսութիւննա տէր Մելքիսեդեկնընկ. տա Աւաքէրէցլիւրնա տէր Քաւրարնընկ տա Երեսփոխանլիւրնա Պարոն Քարբուսնունկ»: . . .

Ամուսնութիւնը տեղի կ'ունենայ 1620 Օգոստոս 15ին ի Լվով: Կ'երեւայ թէ ամբողջ տարին՝ 1619 Սեպտ.—1620 Օգոստ. Լվով անցուց Սիմէոն: 1619ին կ'օրինակէ հոս Տէր Յովհ. Քարմատանենցի համար Առ որս գրոց Լուծմունքը. Յիշատակարանին¹⁵ մէջ կ'ըսուի. «Արդ գրեցաւ գիրս . . . ի վայելումն բանասիրի տէր Յովհաննէս ասացեալ քահանայի որ մականուամբ կոչի Քարմատանենց . . . : Թվ. ՌԿԸ. յիշեսջիք զՍիմէոն զպիր Զամոսցայի»:

Նոյն տէր Յովհաննէսի համար կ'օրինակէ Սիմէոն նաեւ Առ որս կոչուած ճառերը: Զեռագիրը կը պահուի Վիեննայի Միխիթարեան Մատենադարանին մէջ (Թ. 96). և ունի հետեւեալ յիշատակարանը աւելզուածաւոր թուականով¹⁶.

«Արդ գրեցաւ գիրքս որ կոչի Առ որս

¹⁵ Ձեռ. էջմ., Թ. 100: ՏԷ՛ս էջ 393—394:

¹⁶ Հմմտ. Հ. Յ. Տաշեան՝ Յուցակ, էջ 365—366: Տես վարը, էջ 394: